# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

—o—

## ՀԱՆԴԷՍՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

—

Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը կազմել է Թիֆլիսում լինելիք հանդէսների հետևեալ ծրագիրը.

1. Հոկտեմբերի 6-ին քաղաքիս բոլոր հայ եկեղեցիներում ս. պատարագից յետոյ կը լինին քարոզներ ազգային մեծ տօնի մասին։

2. Հոկտեմբերի 11-ին քաղաքիս բոլոր հայ դպրոցներում դասաւանդութիւնը աւարտւում է 3-րդ դասից յետոյ ապա ուսուցիչները բացատրում են ամբողջ աշակերտութեան մեծ տօնի նշանակութիւնը։

3. Հոկտեմբերի 12-ին ս. Թարգմանչաց տօնին Վանաց աւագ եկեղեցում մատուցւում է ս. պատարագ քաղաքիս ամբողջ հոգևոր դասի ներկայութեամբ. պատարագիչն է Աշոտ եպիսկոպոսը։ Պատարագից յետոյ կը կատարւի հոգեհանգիստ Հայ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին։ Եկեղեցում ներկայ են լինելու քաղաքիս բոլոր հայ և պետական դպրոցների աշակերտութիւնը և հայ ուսուցչական դասը։ Հրաւիրւում են ներկայ լինել հայ ազգային և կուլտուրական հաստատութիւնները, հայ վաճառականութիւնը, արհեստաւոր դասը իր դրօշակներով և ամբողջ հայ ժողովուրդը։

4. Հայոց Դրամատիքական Ընկերութեան նախաձեռնութեամբ Արտիստիքական Թատրոնում տեղի կունենայ ձրի ներկայացում հայ աշակերտութեան համար։

5. Երեկոյեան 8 ժամին Թիֆլիսի ժողովարանում տեղի կունենան տօնին նուիրուած դասախօսութիւններ։

6. Հոկտեմբերի 13-ին, Վանաց աւագ եկեղեցում մատուցւում է ս. պատարագ ամբողջ հոգևոր դասի և վերոյիշեալ բոլոր հաստատութիւնների և ժողովրդի ներկայութեամբ, պատարագիչն է Թեմակալ Առաջնորդը։ Պատարագից յետոյ կը կատարւի Հայրապետական մաղթանք։

Ապա հանդէսը Վանքի աւագ եկեղեցուց եկեղեցական թափօրով կուղեւորւի դէպի Ներսիսեան դպրոցի նոր շէնքը։

Դպրոցի դահլիճում հանդէսը բաց կանի Թեմի Առաջնորդը մի բանախօսութեամբ.

Հանդէսին հրաւիրւած են լինելու պետական բարձրաստիճան պաշտօնեաներ և քաղաքիս բոլոր կուլտուրական հաստատութիւնների ներկայացուցիչներ։

Հրաւիրուած օտարազգի հիւրերի համար կը լինի բանախօսութիւն ռուսերէն լեզուով։

Հանդիսին կընդունեն շնորհաւորութիւններ տօնի առիթով,

7. Դպրոցի հոգաբարձութիւնը ներկաներին կը հիւրասիրի թէյով։ Նոյն օրը երեկոյեան Թիֆլիսի ժողովարանի դահլիճում տեղի կունենայ բանկէտ։

8. Հոկտեմբերի 14-ին Արտիստիք. Թատրոնում երեկոյեան 8 ժամին լինելու է տօնին նուիրուած ներկայացում կենդանի պատկերներով.

---

## ՅՈԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Դիմում է եղել Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուին, որպէս զի պետական դպրոցների հայ աշակերտներին ամսիս 12-ին շուտ արձակեն եկեղեցի ուղարկելու համար։

— Դիմել է նոյնպէս արհեստաւորների աւագին, որպէս զի նա թոյլտւութիւն տանայ ներկայ գտնւելու շաբաթ և կիրակի օրերի յոբելեանական հանդէսներին արհեստաւորների դրօշակներով։

— Ձեռք է բերուած յոբելեանի առթիւ լոյս տեսած Լէօի «Հայ գիրը» գրքոյկից 1300 օրինակ, որ առաջնորդարանը ուղարկելու է Թիֆլիսի թեմի գիւղերը ժողովրդի մէջ բաժանելու համար։ Տպագրւում է նոյն գրքից 5000 օրինակ Կովկասի բոլոր քաղաքներում և գիւղերում տարածելու համար։

— Առաջնորդարանից դպրոցական ֆոնդի հանգանակութեան թերթեր են ուղարկւած բոլոր դասակարգերի ներկայացուցիչներին։

—

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴ

Թիֆլիսի թեմի առաջնորդարանում դպրոցական ֆոնդի համար ստացել են հետևեալ նւէրները.

Թիֆլիսի թեմի առաջնորդից—200 ր., Մարկոս Դոլուխանեանից—500 ր., Յովհ. Թումանեանից—25 ր., Ղազարեան ա. ք.—25 ր., Կոստանդին Իսգբաշեանից—3 ր., Միքայէլ Օհանեանից—25 ր., տիկ. Մաղաթեանից—300 ր., տիկ. Նատալիայից—100 ր., Մայրապետ Թայիրեանից և կոյսերից—50 ր., ընդամենը 1228 ր.։

---